Տնօրեն

Ա. Աղիկյան

ՄԿԱՏ

Կ. Բարխուդարյան

# Լոռու մարզի Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 4-րդ դասարանի դասղեկի աշխատանքային թղթապանակ

Դասղեկ՝ Գ. Հախինյան

## Դասարանի ծնողական խորհուրդ

| h/h | Անուն ազգանուն հայրանուն | Պաշտոն |
|---|---|---|
| 1 | Կոստանդյան Տաթև | Նախագահ |
| 2 | Ադիբեկյան Մանուշակ | Անդամ |
| 3 | Դավիթավյան Ժենյա | Անդամ |
| 4 | Սարգսյան Շուշան | Անդամ |
| 5 | Մանթաշյան Քրիստինե | Անդամ |

## Ներածություն

Դասարանը բաղկացած է 27 աշակերտից, որից 12-ը աղջիկ, 15-ը՝ տղա: Զգացվում է, թե ինչպես է պակասում նախակրթարան չհաճախելը: Համավարակի պատճառով սահմանափակ շփումները ու ընկճվածությունը բացասական ազդեցություն է թողել բնականոն աշխատանքների վրա: Աշխատում ենք կրկնակի լարվածությամբ, ավելի շատ ենք ներգրավում ծնողներին: Ե՛վ երեխաները, և՛ ծնողները ուշադիր են, բոլորն էլ ցանկանում են լավ սովորել, դառնալ լավագույնը:

### Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում

- Անցկացնել փոքրիկ միջոցառումներ՝ նվիրված տոներին, հանդիսավոր օրերին:
- Կատարել դաստիարակչական զրույցներ:
- Կատարել ընթերցումների քննարկումներ,ճանաչել հեքիաթի հերոսներին:
- Տարբեր դաստիարակչական աշխատանքների միջոցով սերմանել աշակերտների մեջ մարդկային վեհ հատկանիշներ: Դնել մարդ-անհատի ձևավորման հիմքը:

### Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն-Անցկացնել հանդիպումներ քահանայի հետ, կատարել էքսկուրսիա դեպի գյուղի եկեղեցի: Անցկացնել զրույցներ՝ նվիրված եկեղեցական ծեսերին և քրիստոնեությանը:

Գեղագիտական դաստիարակություն-Սովորեցնել զգալ գեղեցիկը բնության մեջ, բնության երևույթների մեջ և վեր դասել բնական գեղեցկությունը: Գեղեցիկը որսալ և ձգտել: Պատմել նշանավոր հայ արվեստագետների մասին, արթացնել սեր երաժշտության հանդեպ:

**Ռազմահայրենասիրական դաստիրակություն**-Անցկացնել զրույցներ, միջոցառումներ նվիրված հայրենիքի, հայեցի դաստիարակությանը: Սովորեցնել կրել հոգում հայոց գիրը պաշտպան կանգնել հայրենիքին, հարգել զինվորին, հպարտանալ հայոց բանակով:

**Ֆիզիկական դաստիրակություն**-Անցկացնել զրույցներ ֆիզիկական դաստիարակության կերևորության մասին: Տանել զրույցներ սպորտի սպորտի վերաբերյալ: Կատարել շարժական խաղեր, ֆիզիկական վարժություններ, անցկացնել սպորտային մրցույթներ:

**Աշխատանքային դաստիարակություն**- Անցկացնել զրույցներ աշխատանքի և աշխատասիրության վերաբերյալ : Սովորել աշխատել համառորեն և հաճույքով:

**Բնապահպանական դաստիարակություն**-Անցկացնել էքսկուրսիա դեպի բնություն: Սովորեցնել սիրել բնությունը, հոգ տանել մաքրության և պահպանելու վերաբերյալ: Սովորեցնել խնամել ծաղիկներ: Կազմակերպել ծառատունկ:

**Դպրոց-ընտանիք կապը**-Ընտրել ծնողական կոմիտե: Ժողովներում քննարկել վիճելի հարցերը, կիսամյակայինների արդյունքները, ընդունել որոշումներ: Ծնողների հետ տանել աշխատանքներ, լսել նրանց, կարծիքները հարգել: Օժանդակել հարկ եղած դեպքում:

# Դասղեկի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանավորում

| հ/հ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բնութագիր |
|---|---|
| 1 | <<Բարի գալուստ դպրոց>><br>Հակահամաճարակային կանոնների քննարկում: |
| 2 | Անցկացնել զրույց՝ համերաշխության շուրջ: |
| 3 | Ինչու՞ են չվում թռչունները: |
| 4 | Զրույց <<Ազատ, անկախ հայաստանի քաղաքացի>>: |
| 5 | Զրույց <<Աշնանային մտորումներ>>: |
| 6 | Ո՞վ է իմ իդեալը, ո՞ւմ կուզենայի նմանվել: |
| 7 | Զրույց բերքահավաքի, բերքը ճիշտ պահելու, օգտագործելու շուրջ: |
| 8 | Աշակերտի հիգիենա |
| 9 | Բնությունը և մենք |
| 10 | Հանդիպում բուժքրոջ հետ |
| 11 | Գրենական պիտույքների ճիշտ և խնամքով օգտագործումը |
| 12 | Երեխաների իրավունքները ու պարտականությունները |
| 13 | Զրույց Ամանորի մասին |
| 14 | Ո՞վ և ինչո՞ւ է ընտրել իմ անունը |
| 15 | Հայոց բանակի օր |
| 16 | Զրույց <<Էս մի բուռն էլ թռչուններին>> |
| 17 | Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության օր |
| 18 | Դասասենյակի նախապատրաստում գարնանը |
| 19 | Համագործակցություն |
| 20 | Արդյունավետ հաղորդակցում |
| 21 | Գարունն իմ գյուղում |
| 22 | Մասնակցություն, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում |
| 23 | Շրջակա միջավայր |
| 24 | Իմ ընտանիքը |
| 25 | Մեր դպրոցը |
| 26 | Մարդիկ մեր շուրջը |
| 27 | Զրույց <<Ո՞վ կլինեմ ես ապագայում....>> թեմայով |
| 28 | Զրույց <<Ընկերասիրություն>> թեմայով |
| 29 | Կոնֆլիկտների հաղթահարում |
| 30 | Անցկացնել զրույց՝ օգնելուն պատրաստակամ լինելու վերաբերյալ: |
| 31 | Գրագետ եմ արդեն |
| 32 | Ամփոփում |